ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

21.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/38

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 26-3/[1286605]-19 գրությամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 08.02.2019թ. թիվ 1/18-3/[1285596]-19 գրության հիման վրա, 14.02.2019թ. թիվ 26-3/[1286605]-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել 23.01.2019թ. դրությամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության թիվ 3 բաժնի 07.02.2019թ. թիվ 173 և 14.02.2019թ. թիվ 222 տեղեկանքները:

«Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 19.02.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 08.02.2019թ. թիվ 1/18-3/[1285596]-19 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի՝ «Լորենի» հրատարակչատուն ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02551445, հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող., 4 շենք (նախկին 2ա), 8-րդ հարկ, էլ հասցե՝ gay-vard@yandex.ru) մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (մասնակիցը ներկայացրել է 252 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 12 000 ՀՀ դրամի չափով):

Ամփոփելով վերը նվածը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526–Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ներկայացնում է «Լորենի» հրատարակչատուն ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 19.02.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2019/38 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մուրհակների տպագրական աշխատանքներրի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ***23.01.2019թ.*** հայտ է ներկայացրել «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 01.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 12 000 ՀՀ դրամի չափով:***

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 04.02.2019թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 26-3/[1286605]-19 և 08.02.2019թ. թիվ 1/18-3/[1285596]-19 գրությունները՝ կից փաստաթղթերով, 23.01.2019թ. դրությամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության թիվ 3 բաժնի 07.02.2019թ. թիվ 173 և 14.02.2019թ. թիվ 222 տեղեկանքները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը

կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մուրհակների տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ***23.01.2019թ.*** հայտ է ներկայացրել «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.01.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 29.01.2019թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 01.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 12 000 ՀՀ դրամի չափով:***

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 04.02.2019թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 01.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 23.01.2019թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 12 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի (252 000 ՀՀ դրամ) մեկ տոկոսը:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 23.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.02.2019թ. տրված թիվ 173 տեղեկանքը, համաձայն որի 06.02.2019թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 12 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է, իսկ 14.02.2019թ. տրված թիվ 222 տեղեկանքի համաձայն՝

08.02.2019թ. դրությամբ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 23.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա

անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ն «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՇՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 26-3/[1286605]-19 գրությամբ «Լորենի հրատարակչատուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**